Նազիկ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Աշխարհագրական գիտության մեջ ընդունված է, որ միգրացիաները հսկայական ազդեցություն են ունենում ոչ միայն առանձին բնակավայրերի կամ շրջանների, այլ երկրների և մայրցամաքների բնակչության շարժընթացի, կառուցվածքի և աշխարհագրության վրա[1]: Ասվածը համոզիչ կերպով ապացուցում են վերջին տասնամյակներում սկիզբ առած բնակչության նոր տեղաշարժերը՝ պայմանավորված երկրագնդի տարբեր հատվածներում գոյություն ունեցող հակամարտություններով, բնական աղետներով, անցումային շրջանի երկրներում, այդ թվում նաև նախկին ԽՍՀՄ հանրապետությունների մեծ մասում առկա սոցիալ-տնտեսական, քաղաքական ու այլ բնույթի հիմնախնդիրներով[2]: Ընդ որում, միգրացիաների ուսումնասիրությունը չափազանց կարևոր է և՛ արտագաղթի, և՛ ներգաղթի բարձր տեսակարար կշիռ ունեցող պետությունների համար: Առաջին դեպքում առաջանում են ժողովրդագրական բնականոն իրավիճակին ու բնակչության վերարտադրողական կարողություններին առնչվող հիմնախնդիրներ, երկրորդ դեպքում արդեն միգրանտների մեծ թիվը լուրջ բարդություն է ներկայացնում աշխատաշուկայի կարգավորման, միգրանտների նկատմամբ պետական վերահսկողության սահմանման, վերջիններիս հաշվառման և այլ առումներով:

Հայաստանի Հանրապետությունը ևս զերծ չի մնացել անցումային շրջանի հիմնախնդիրներից: 20-րդ դարի վերջին տասնամյակը և 21-րդ դարասկիզբը Հայաստանի համար բնութագրվում են քաղաքական ու սոցիալ-տնտեսական բազմաբնույթ համակարգային և արմատական փոփոխություններով: Միայն այս ժամանակահատվածի իրադարձությունների ոչ լրիվ թվարկումը՝ արցախյան ազգային-ազատագրական շարժում, Հայաստանի անկախացում, դրան հաջորդած քաղաքական ու սոցիալ-տնտեսական վերափոխումներ և վերջիններիս անբաժան մաս հանդիսացող հասարակական գործընթացներ իրենց տարբեր դրսևորումներով, ցույց է տալիս, թե ինչպիսի բարդ ու բազմաբովանդակ խնդիրներ են ծառացել հանրապետության առջև: Որպես դրանց ուղղակի կամ անուղղակի հետևանք են հանդես գալիս նաև բնակչության ինչպես ներհանրապետական, այնպես էլ միջպետական տեղաշարժերը: Վերջին տարիներին հրատարակվել են պաշտոնական վիճակագրական տվյալներ, անկախ փորձագիտական գնահատականներ, մասնագիտական հետազոտություններ, որոնք թույլ են տալիս արձանագրել, որ հանրապետության անկախացումից հետո ակտիվացած միգրացիոն գործընթացներն ընդգրկել են բոլոր մարզերը, հասարակության գրեթե բոլոր սոցիալ-մասնագիտական ու սեռատարիքային խմբերը՝ կապված սոցիալ-տնտեսական ծանր ճգնաժամի, 1990-ական թթ. իրականացվող տնտեսական վերափոխումների ազդեցության, զանգվածային գործազրկության, բնակչության կենսամակարդակի կտրուկ անկման և բազմաթիվ այլ գործոնների հետ:[3]

Բնական է, որ Աղետի գոտին ևս զերծ չի մնացել նշված գործոնների ազդեցությունից: Ավելին, հանդես գալով որպես ընդհանուր տնտեսական ճգնաժամի ուղղակի կրող, այն ունի նաև երկրաշարժի ազդեցության հետ կապված բազմաթիվ առանձնահատկություններ: Թվարկված երևույթների շարքում իր ազդեցությամբ, ընդգրկմամբ ու բնակչության տարբեր խմբերի վրա ունեցած աննախադեպ ազդեցությամբ առանձնանում է 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժը: Չմանրամասնելով երկրաշարժի ազդեցությանն ու հետևանքներին վերաբերող խնդիրները՝ նշենք միայն, որ այն

---

[1] *Е. Шувалов, География населения, М., 1977, стр. 92:*

[2] *Вынужденные мигранты: интеграция и возвращение, М., 1997, стр. 7-31; Положение беженцев в странах мира, 1995, акти решение, М., 1996; Миграции и новые диаспоры в постсоветских государствах, М., 1996, стр. 147-171:*

[3] *Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Եր., 2003, էջ 21-46: Հ. Խառատյան, Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Եր., 2000, էջ 28-29: Արտագաղթը Հայաստանից (Խմբ. Հ. Խառատյան), Եր., 2003: ՀՀ-ից արտագաղթի մասին տվյալներ են պարունակում նաև ՀՀ ԱՎԾ ընթացիկ և տարեկան տարբեր զեկույցներն ու հաշվետվությունները:*

ընդգրկել է հանրապետության տարածքի շուրջ 40%-ը՝ գրեթե մեկ միլիոն բնակչությամբ: Վթարային էին դարձել կամ ավերվել տասնյակ հազարավոր բնակելի տներ, արդյունաբերական ձեռնարկություններ, գիտակրթական ու մշակութային հաստատություններ, խաթարվել էր հանրապետության բազմաթիվ քաղաքային ու գյուղական բնակավայրերի կենսագործունեությունը:

Աղետից հետո նախկին խորհրդային և ՀՀ ղեկավարության կողմից ձեռնարկվել են երկրաշարժի հետևանքների վերացմանն ուղղված քայլեր: Սակայն, առ այսօր երկրաշարժի հետևանքներն ամբողջովին հաղթահարված չեն: Աղետի գոտու տարբեր քաղաքներում դեռևս բավականին մեծ է տնակային պայմաններում բնակվող ընտանիքների թիվը, չեն վերագործարկվել բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ, դանդաղ է ընթանում նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչությանն աշխատանքով ապահովելու գործընթացը: Այս ամենի արդյունքում Աղետի գոտում ձևավորվել են բնակչության միգրացիոն նոր հոսքեր:

Երկրաշարժից հետո ձևավորվել և ուրվագծվել են Աղետի գոտու բնակչության միգրացիոն շարժերի հիմնական միտումները, որոնցից ածանցվել և ածանցվելու է Աղետի գոտու սոցիալ-տնտեսական համալիրում պատճառահետևանքային կապի մեջ գտնվող երևույթների ողջ համալիրը: Միգրացիոն ակտիվության տեսանկյունից 1988-2002թթ. Աղետի գոտում առանձնանում է երեք փուլ՝ 1988-1991թթ., 1992-1994թթ. և 1995-2002թթ., երբ միգրացիայի ծավալը համապատասխանաբար կազմել է 177117, 56402 և 63931 մարդ: Սակայն, եթե 1988-1991թթ. միգրացիայի ծավալի ձևավորման մեջ նկատվում էր եկողների և մեկնողների հարաբերակցության համամասնություն, համապատասխանաբար՝ 49.8% և 50.2%, ապա 1992-1994թթ. և 1995-2002թթ. պատկերը փոխվում է: 1992-1994թթ. միգրացիայի ծավալի ձևավորման մեջ եկողների տեսակարար կշիռը կազմում է ընդամենը 38.1%, մեկնողներինը՝ 61.9%, 1995-2002թթ.՝ համապատասխանաբար 33.9% և 66.1%:

Այս երևույթն առաջին հերթին կապված է վերականգնողական աշխատանքների տեմպերի թուլացման, առանձին դեպքերում՝ նաև դադարեցման հետ: Բնական է, որ որոշ դեպքերում բնակչության մի մասը հեռանում էր Աղետի գոտուց կենսապահովման անտանելի պայմանների բարելավման նպատակով: Ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն նաև զանգվածային գործազրկությունն ու ծանր բարոյահոգեբանական մթնոլորտը: Բացի դրանից՝ երկրաշարժից հետո էվակուացված բնակչության մի մասը ևս խուսափում էր վերադառնալ, քանի որ խոստացած ժամկետներում չէին վերականգնվում հատկապես առավել տուժած քաղաքային բնակավայրերը:

Կապված վերականգնողական աշխատանքների ակտիվացման հետ՝ 2001-2002թթ. նկատվել է եկողների որոշակի աճ՝ համեմատած 2000թ. հետ: Սակայն նախորդ տարվա համեմատ, աճել է նաև մեկնողների թիվը, որը բարձր է եղել հատկապես 2002թ., ինչը վկայում է այն մասին, որ նույնիսկ բնակարանային հիմնախնդրի լուծումը չի կարող կանխել արտահոսքն Աղետի գոտուց, քանի որ դեռևս հաղթահարված չէ տարիների ընթացքում ձևավորված և աստիճանաբար առավել սրացող սոցիալ-տնտեսական ճգնաժամը, ինչին նպաստել են ինչպես Աղետի գոտուն, այնպես էլ հանրապետությանը բնորոշ գործոնները: Այսինքն, Աղետի գոտուն բնորոշ գործոններին զուգահեռ ազդում են նաև ընդհանուր հանրապետական գործոններ՝ էներգետիկ ճգնաժամ, տրանսպորտային շրջափակում,տնտեսական վերափոխումների ազդեցություն և այլն:

Աղետի գոտու բնակչության միգրացիայի հարաբերական ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ վերջիններս ունեն որոշակի առանձնահատկություններ: Այսպես. չնայած 1989թ. մեկնողները գերազանցել են 1988թ. մեկնողներին, բնակչության միգրացիայի լարվածության ցուցանիշն առավել բարձր է եղել 1988թ., քանի որ Աղետի գոտու բնակչության բնական աճը 1988թ. եղել է շատ ցածր: Այնուհետև, բնակչության միգրացիայի լարվածությունը նվազել է՝ նվազագույնին հասնելով 1991թ., որից հետո կրկին աճել է: Սկսած 1994թ-ից այն կրկին նվազում է, իսկ 1997թ.-ից աճելով՝ 2002թ.-ին հասնում է առավելագույնի: Եթե 1988-1990թթ. գյուղական բնակավայրերի բնակչության միգրացիայի լարվածությունը գերազանցել է քաղաքային բնակավայրերի միգրացիայի լարվածությանը, ապա սկսած 1991թ.-ից դիտվում է հակառակ պատկերը: 1988-1990թթ. գյուղերի բնակչության միգրացիայի լարվածութ-

յան արդյունքում Աղետի գոտու մի քանի գյուղեր դատարկվեցին (հիմնականում ադրբեջանցիների հեռանալու պատճառով): Բնական է, որ նվազել է նաև ադրբեջանաբնակ գյուղեր ունեցող շրջանների բնակչության բնական աճը:

Աղետի գոտու բնակչության միգրացիայի արդյունավետությունը քննարկվող ժամանակահատվածում, կապված բնակչության միգրացիոն սալդոյի և եկողների թվաքանակի փոփոխության հետ, նույնպես ունեցել է որոշակի առանձնահատկություններ: Այսպես՝ 1988թ. լինելով ցածր, այն այնուհետև սկսում է աստիճանաբար աճել: 1991թ. նկատվում է միգրացիայի արդյունավետության ամենաբարձր ցուցանիշը, քանի որ այդ տարի Աղետի գոտի են եկել մեծ թվով միգրանտներ: 1992թ. դարձյալ գոտու բնակչության միգրացիայի արդյունավետությունը կտրուկ նվազում է՝ շարունակվելով մինչև 1994թ.: Հարկ է նշել, որ փաստորեն Աղետի գոտու բնակչության միգրացիայի արդյունավետության բարելավում չի նկատվում: 1998թ. նշված ցուցանիշը գրեթե հավասարվում է 1988թ. համապատասխան ցուցանիշին, իսկ 2002թ. զիջում է վերջինիս: Նշենք նաև, որ սկսած 1992թ.-ից, Աղետի գոտու քաղաքային բնակավայրերի միգրացիայի արդյունավետության ցուցանիշը զգալիորեն զիջում է գյուղերի բնակչության միգրացիայի արդյունավետությանը, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ Աղետի գոտու քաղաքները քննարկվող ժամանակահատվածում միգրանտներ ընդունելու տեսանկյունից կորցրել են իրենց երբեմնի նշանակությունն ու գրավչությունը:

Ինչ վերաբերում է Աղետի գոտու բնակչության ներհոսքի և արտահոսքի ինտենսիվությանը, ապա պետք է նշել, որ արտահոսքի ինտենսիվությունը քննարկվող ժամանակահատվածում գերազանցել է ներհոսքի ինտենսիվությանը: Այս օրինաչափությունը խախտվել է 1990 և 1991թթ., միայն այս տարիներին է Աղետի գոտի եկողների թիվը գերազանցել մեկնողների թվին: Ընդհանուր առմամբ, 1988-2002թթ. Աղետի գոտում բնակչության մեխանիկական աճ չի դիտվել:

Միգրացիայի ինտենսիվությունը քննարկվող ժամանակահատվածում ունեցել է հետևյալ պատկերն ու փոփոխությունների շարժընթացը. 1988-1991թթ. այն եղել է բարձր՝ առավելագույնին հասնելով 1989թ., 1992-1994թթ. նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ նվազել է ու կայունացել, 1995-1998թթ. դիտվել է նվազման միտում: 1999թ. սկսած միգրացիայի ինտենսիվությունը սկսել է աճել:

1988-2002թթ. Աղետի գոտու բնակչության միգրացիայի ծավալը կազմել է 297450[4] մարդ: Մեկնողների թվաքանակը գերազանցել է եկողների թվաքանակին, ինչի արդյունքում միգրացիոն սալդոն եղել է բացասական: Միգրացիոն սալդոյի բացասական մեծությունը ձևավորվել է հիմնականում քաղաքների միգրացիոն սալդոյի բացասական մեծությունից: Միգրացիայի ծավալը բարձր է եղել Լոռու մարզում՝ կազմելով Աղետի գոտու միգրացիայի ծավալի 45.3%-ը: Շիրակի մարզում այն կազմել է Աղետի գոտու միգրացիայի ծավալի 31.6%-ը, Տավուշի մարզում՝ 16.8% և Արագածոտնի մարզում (առանց Աշտարակի տարածաշրջանի)՝ 6.4%: Բոլոր մարզերում միգրացիայի սալդոն եղել է բացասական, սակայն ամենամեծ բացասական մեծությունն արձանագրվել է Շիրակի մարզում, ինչը պայմանավորված է հիմնականում Գյումրի քաղաքում ստեղծված իրավիճակով. տնակային պայմաններ, արդյունաբերական ձեռնարկությունների անգործություն (վերջիններիս մեծ մասն ավերված է, մի մասը՝ վթարային), որը և նպաստել է բնակչության այտահոսքին:

Աղետի գոտուց մեկնողների ընդհանուր թվաքանակի մեջ մինչև 16 տարեկանների տեսակարար կշռի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ այն բարձր է եղել 1988-1989թթ. (18% և 19%) և 1996-1997թթ. (18% և 20%), իսկ սկսած 1997թ.-ից գերազանցել է 1988-1989թթ. ցուցանիշը: Նշվածը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ Աղետի գոտուց մեկնողների մեջ մեծ է ընտանիքների տեսակարար կշիռը, ինչը փաստորեն ձևավորում է անվերադարձ միգրացիա: Եթե 1988-1989թթ. ընտանիքների արտահոսքը պայմանավորված էր երկրաշարժի անմիջական հետևանքներով, ապա հետագայում՝ Աղետի գոտին չափազանց դանդաղ վերականգնման ստեղծած ճգնաժամային իրավիճակով:

---

[4] *Հաշվարկը կատարվել է ըստ բնակչության միգրացիայի հաշվառման քարտերի:*

Նշենք, որ բերված տվյալները վերաբերում են գերազանցապես օրինական ճանապարհով գրանցումից դուրս եկած և գրանցված բնակչությանը: Սակայն, ինչպես ցույց են տալիս վերջին տարիների բազմաթիվ ուսումնասիրությունները, ինչպես նաև պետական կառավարման տարբեր մարմինների հայտարարությունները, առկա է նաև հանրապետությունից բացակայող և գրանցումից դուրս չեկած բնակչության մի ստվար զանգված, այսպես կոչված «ստվերային միգրացիա», որի վերաբերյալ ամբողջական հաշվառում չի իրականացվում:[5]

Սեզոնային միգրացիան, որը նույնպես բավականին լայն տարածում ունի Աղետի գոտում, աչքի է ընկնում ազատ աշխատանքային ռեսուրսների մեծ ներգրավվածությամբ: Ընդ որում, հասարակության զարգացման վրա առավել մեծ ազդեցություն է ունենում աշխատուժի միգրացիան, իսկ առանձին դեպքերում ելքի երկրներում անբարենպաստ պայմանների ազդեցության հետևանքով անընդհատ առկա է սեզոնային միգրացիայի վերածման վտանգն անվերադարձ միգրացիայի, քանի որ ազատ աշխատուժը տեղում զբաղվածություն չգտնելու դեպքում ձգտում է դեպի այն վայրը, ուր կա աշխատելու հնարավորություն: Իսկ Աղետի գոտում ձևավորված իրավիճակը նման մտավախության համար առավել իրական հիմքեր է ստեղծում:

Քննարկվող ժամանակահատվածում, բացի ծավալային տեսանկյունից, որոշակի փոփոխությունների է ենթարկվել նաև Աղետի գոտու բնակչության սեզոնային միգրացիան՝ ինչպես ըստ ուղղությունների, այնպես էլ դրդապատճառների ու դրսում զբաղվածության ընդհանուր պատկերի:

Առավել ընդհանրացված դիտարկման ու խորհրդային շրջանի հետ համեմատության դեպքում կարող ենք արձանագրել, որ Աղետի գոտու մեջ ընդգրկված որոշ վարչատարածքային միավորներ նաև նախկինում են աչքի ընկել սեզոնային միգրացիայի ձևավորված «ավանդական» ուղղություններով: Առանձին դեպքերում նույնիսկ որոշ բնակավայրեր ունեցել են բնակչության սեզոնային զբաղվածությունն ապահովող հիմնական կենտրոններ: Սեզոնային միգրացիայի մեջ նախկինում, ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, ավելի շատ ընդգրկված է եղել գյուղական բնակչությունը, որը հիմնականում ամռան, ինչպես նաև գարնան ու աշնան որոշ ամիսների մեկել է արտագնա շինարարական աշխատանքներ: Քաղաքաբնակները սեզոնային միգրացիայի մեջ ընդգրկվել են հիմնականում ամառային հանգիստը կազմակերպելու նպատակներից ելնելով, քանի որ արդյունաբերության զարգացման բարձր տեմպերը վերջիններիս զբաղվածությունն ապահովելու իրական երաշխիք են:

Սպիտակի երկրաշարժը, բնականաբար, ազդեց նաև սեզոնային միգրացիայում ընդգրկվածների թվի, միգրացիայի բնույթի և տարածական ընդգրկման վրա:

Մինչև 1991թ. հանրապետությունից դուրս մեկնող սեզոնային միգրանտների զգալի մասը մնաց Հայաստանում և մասնակցեց Աղետի գոտու վերականգնման աշխատանքներին. Սրանք և՛ գյուղաբնակ, և՛ քաղաքաբնակ շինարարներն էին: Սակայն, 1991թ.-ից արդեն շինարարական աշխատանքների ծավալների կտրուկ անկման հետևանքով վերջիններս կրկին կանգնեցին զբաղվածություն ապահովելու հիմնախնդրի առջև՝ ատիճանաբար վերականգնելով ավանդաբար ձևավորված կապերը: Այս ուղղությանը, այսինքն՝ «ավանդական» կապերի վերականգնմանը զուգահեռ, նշված տարիներից սկսեց փոխվել սեզոնային միգրացիայի աշխարհագրությունը: Պատճառները մի քանիսն էին: ԽՍՀՄ-ը փլուզվել էր, միջպետական տնտեսական կապերը սկսել էին թուլանալ, նորանկախ պետությունները գտնվում էին տնտեսական վերափոխումներից ածանցված խնդիրների հաղթահարման փուլում, մասնավոր սեկտորում ևս տեղի էր

---

[5] Սկսած 2000թ-ից՝ ՀՀ Կառավարությանն առընթեր Միգրացիայի և փախստականների վարչությունը ՀՀ ԱՎԾ հետ մեկտեղ, համագործակցելով տրանսպորտային ձեռնարկությունների և ՀՀ պետական ոստիանի անցման կետերում գործող ծառայությունների հետ, կազմակերպում է հանրապետություն եկողների և հանրապետությունից մեկնողների վերաբերյալ բանակական տվյալների ստացման գործընթացը: Սակայն պետք է նշել, որ հրապարակի վրա եղած տվյալները հնարավորություն չեն ընձեռում դիտարկել դրանց տարածքային առանձնահատկությունները, ինչպես նաև պատկերացում կազմել միգրացիոն գործընթացների բնույթի, տևականության և այլնի վերաբերյալ:

ունենում դերերի վերաբաշխում, ինչը, բնականաբար, նույնպես նպաստեց սեզոնային միգրանտների զբաղվածության ոլորտի էական փոփոխություններին:

Միաժամանակ, սեզոնային միգրացիայում ընդգրկվում են բնակչության նոր շերտեր: Խորհրդային շրջանում կար սեզոնային շինարարական աշխատանքների մեկնողների կատեգորիա, որի տեղաշարժերի ուղղությունները վերահսկելը ընդհանուր պետության ու տնտեսական դաշտի շրջանակներում բավականին հեշտ էր: Վերջին տասնամյակում սեզոնային միգրացիայում ընդգրկվածների պարագայում արդեն բավականին բարդ է քանակական տվյալներ հավաքագրելը: Նախ, ի տարբերություն նախորդ տարիների, այժմ սեզոնային արտագնա աշխատանքների մեկնողների մի մասը նախընտրում է ավելի բարձր ու արագ եկամուտներ ապահովող ճյուղերում ներգրավվելը: Որոշ մասի համար դա հիմնականում մանրածախ կամ մեծածախ առևտուրն է: Բնական է, որ սեզոնային միգրանտների այս խումբը ձգտում է տեղավորվել հիմնականում խոշոր քաղաքներում՝ Մոսկվա, Սանկտ-Պետերբուրգ, Սամարա, Կրասնոյարսկ, Նովոսիբիրսկ, Հեռավոր Արևելքի որոշ քաղաքներ: Այս խմբի տեղափոխությունների աշխարհագրությունը բազմաթիվ դեպքերում դուրս է գալիս ՌԴ սահմաններից՝ Կիև, Մինսկ, եվրոպական որոշ պետությունների խոշոր քաղաքներ, հատկապես Լեհաստան՝ Վարշավա, Լոձ, Վրոցլավ և այլք: Հիմնականում շինարարությամբ զբաղվողների խումբը ևս փոխել է աշխարհագրությունը. ավանդական համարվող Սախա-Յակուտիային կամ Սիբիրի ու Հեռավոր Արևելքի որոշ այլ տարածաշրջաններին ավելացել են նույն Մոսկվան՝ շինարարական աշխատանքների իր հսկայական ծավալներով, Մոսկվայի մարզի ու ՌԴ եվրոպական մասի բազմաթիվ քաղաքներ: Սեզոնային արտագնա աշխատանքով զբաղվող որոշ անձանց հետ մեր հանդիպումներն Աղետի գոտում թույլ են տալիս արձանագրել ևս մեկ ուշագրավ իրողություն՝ կապված արդեն դրսում վերջիններիս շարժունության աճի հետ: Սեզոնային միգրանտների բազմաթիվ խմբեր բավականին արագ են փոխում ժամանակավոր բնակության վայրերը՝ շատ հաճախ հաջորդաբար ժամանակավորապես հաստատվելով տարբեր քաղաքներում: Նման ակտիվությունն ու շարժունությունը, բնականաբար, էլ ավելի են բարդացնում սեզոնային միգրանտների տեղափոխությունների «աշխարհագրության» հետ կապված կոնկրետ խնդիրների բացահայտումը: Որպես ևս մեկ կարևոր իրողություն պետք է նշել նաև սեզոնային միգրանտների խմբի սոցիալ-մասնագիտական ու կրթական կառուցվածքում կատարված փոփոխությունները: Բնական է, որ երկրաշարժի արդյունքում աշխատատեղերից զրկվածների մի մասը ևս աստիճանաբար համալրում էր սեզոնային միգրանտների շարքը: Այսինքն, քաղաքաբնակները ևս կանգնեցին սեզոնային միգրացիայի միջոցով նվազագույն գոյամիջոցներ ապահովելու խնդրի առջև: Վերջիններիս սոցիալական կազմը, ի տարբերություն գյուղաբնակների, խայտաբղետ էր: Այն ներառում էր մտավորականությանը, արդյունաբերական ձեռնարկությունների նախկին աշխատողներին և այլն: Ընդ որում, տղամարդկանց հետ աստիճանաբար սեզոնային միգրացիայի մեջ ընդգրկվում էին նաև կանայք: 1990-ական թվականների կեսերին արդեն Աղետի գոտում առկա տեղային գործոններին ավելացան նաև ընդհանուր հանրապետական գործոնները:

Ինչպես նշվեց, քննարկվող ժամանակահատվածում փոխվել է նաև սեզոնային միգրացիայի աշխարհագրությունը: Նախկին ԽՍՀՄ սահմաններից դուրս մեկնելու հնարավորությունների աճին զուգընթաց՝ աճում էր Եվրոպա, ԱՄՆ, Լատինական Ամերիկայի երկրներ, Ավստրալիա մեկնող սեզոնային միգրանտների հոսքը, որոնց վերաբերյալ ևս բացակայում են ամբողջական թվային տվյալները:

Չնայած վիճակագրության հետ կապված բարդություններին՝ պետք է արձանագրել, որ սեզոնային միգրացիան իր տարբեր դրսևորումներով, նրանում ընդգրկվածների սոցիալական ու մասնագիտական կազմով, վերջին տարիներին բավականին լուրջ ազդեցություն է թողնում ինչպես հանրապետությունում, այնպես էլ, հատկապես Աղետի գոտում ընթացող տարբեր գործընթացների վրա: Կարևոր է հատկապես այն, որ վերջին տարիներին սեզոնային միգրացիան դրսևորում է մշտականի վերածվելու միտումներ, ինչն իր հերթին կարող է ազդել Աղետի գոտում ձևավորված ընդհանուր մթնոլորտի վրա:

Ամփոփելով նշենք, որ 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը, չնայած հատկապես վերջին տարիներին աղետի հետևանքների վերացման ուղղությամբ իրագործված աշխատանքների լուրջ ծավալներին, առաջիկայում էլ կշարունակի հանդես գալ որպես Աղետի գոտու գործընթացների, հատկապես բնակչության միգրացիոն շարժերի հիմքում ընկած բավականին կարևոր գործոն: Բնական է, որ բազմաթիվ պատճառներ, կապված բնակարանային հիմնախնդրի լուծման, ենթակառուցվածքների վերականգնման, այլ դրական միտումների հետ, աստիճանաբար թուլացնում են իրենց ազդեցությունը: Սակայն երկրաշարժի հետևանքների ամբողջական հաղթահարման համար անհրաժեշտ են համալիր միջոցառումներ, որոնց նպատակը պետք է լինի ոչ միայն Աղետի, այլ նաև վերջին տարիների գործընթացների արդյունք հանդիսացող պատճառների վերացումը:

ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ МИГРАЦИОННЫХ ПРОЦЕССОВ НАСЕЛЕНИЯ ЗОНЫ БЕДСТВИЯ

Резюме — *Н. Габриелян*

Спитакское землетрясение 1988 года оказало негативное воздействие на процессы организации общественного производства и жизнедеятельности населения Зоны бедствия. В сочетании с влиянием социально-экономических и политических преобразований оно стало причиной формирования новых миграционных потоков населения Зоны бедствия. Многие последствия землетрясения до сих пор сохраняют свое негативное воздействие и продолжают формировать поток мигрантов за пределы республики. В период 1988-2002гг. миграционное сальдо отрицательное. Среди мигрантов, покидающих Зону бедствия, растет удельный вес детей до 16 лет, что говорит о тенденциях формирования безвозвратной миграции.